<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (աշխատատեղեր)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
2. Երեխաների թվի աճ
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (երեխաներ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td><u>Ծրագրի հիմնական գործողությունները</u></td><td>1. Դոնոր կազմակերպությունների փնտրում և դիմել կառավարություն պետական բյուջեից ֆինանսավորում կատարելու համար<br>2. Մրցույթի հայտարարում<br>3. Պայմանագրի կնքում ևհամայնքի կողմից համաֆինանսավորում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 10000.000<br>Ընդհանուր բյուջեն՝ 10000.000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2016-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Համայնքն ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 60 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մսուր մանկապարտեզը գտնվում է վերակառուցման,վերանորոգման փուլում: Համայնքից մոտ 60 երեխա էլ հաճախում է Երևան և այլ վայրերի մանկապարտեզ, ուստի շահագործման արդյունքում մանկապարտեզը կաշխատի ամբողջ հզորությամբ ինչպես նաև կստեղծվեն մոտ 15 աշխատատեղ համայնքի երիտասարդ կադրերի համար:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

## «Համայնքի գլխավոր հատակագծի աշխատանքների ավարտ»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td><u>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</u></td><td>Ավարտին հասցնել գլխավոր հատակագծի ձեռք բերման աշխատանքները:</td></tr>
<tr><td><u>Ծրագրի անմիջական նպատակ</u><br><br>Համայնքի քաղաքաշինության բնագավառի և համայնքի տարածական զարգացման ապահովում</td><td>
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (բաժիններ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u><br><br>Առավել արդյունավետ աշխատանքների կատարում քաղաքաշինության բնագավառում:</td><td>
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
1.
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td><u>Ծրագրի հիմնական գործողությունները</u></td><td>1. Աշխատանքների կատարման ավարտ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր` .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր` 500,0 հազար դրամ (2017թվականին մնացած գումար)<br>Ընդհանուր բյուջեն` 500.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2016-2017թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Համայնքի հետագա տարածական զարգացման, քաղաքաշինության պլանավորման, հողերի արդյունավետ օգտագործման ապահովում</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

## «Կոյուղագծի կառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td><u>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</u></td><td>միջոցներ հայթհայթել կոյուղու կառուցման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերականգնում</td></tr>
<tr><td><u>Ծրագրի անմիջական նպատակ</u><br><br>Համայնքում հին կոյուղագծերի վերանորոգում և համայնքի նոր կառուցվող թաղամասի համար կոյուղու կառուցում:</td><td>Կոյուղու խողովակաշարի երկարությունը<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (գծմ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u><br><br>Կեղտաջրերի արտաքին մակերես դուրս գալու հավանականության փոքրացում, կեղտաջրերի հեռացման աշխատանքների կրճատում՝ ֆինանսական միջոցների խնայում:</td><td>1.Կոյուղու խողովակաշարի վերանորոգում<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (գծմ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
1.
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td><u>Ծրագրի հիմնական գործողությունները</u></td><td>1. Դիմում կոյուղին սպասարկող ընկերությանը<br>2. Մրցույթի հայտարարում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 20000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 20000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2017-2019թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև:</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

### «Ոռոգման ներհամայնքային ցանցի կառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>միջոցներ հայթհայթել ոռոգման փակ ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքային արժեքի ավելացում</td></tr>
<tr><td><u>Ծրագրի անմիջական նպատակ</u><br><br>Համայնքում գյուղատնտեսության կարևորագույն խնդիրներից մեկի լուծում և գյուղատնտեսության զարգացում</td><td>
Ոռոգվող հողատարածությունները
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (հա)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u><br><br>Գյուղատնտեսության զարգացում և ոռոգման ջրի կորուստների կրճատում</td><td>
1. Գյուղատնտեսության զարգացում
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (%)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
2. Ոռոգման ջրի կորուստներ
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (%)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td><u>Ծրագրի հիմնական գործողությունները</u></td><td>1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>2. Համայնքի ներդրում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 80000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 80000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2018-2020թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Համայնքում ոռոգման ջուրը չի մատակարարվում: ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Ջրտնտեսկոմիտեի կողմից իրականացվող <<Գեղարդալճի ինքնահոս համակարգի կառուցում>> աշխատանքները ընթացքի մեջ են.Գեղադիր համայնքը ծրագրի իրականացման ավարտից հետո կապահովվի ոռոգման ջրով:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5

## «Ներհամայնքային փողոցների և ճանապարհների կառուցում,ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>միջոցներ հայթհայթել ճանապարհների կառուցման աշխատանքների իրականացման համար:</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ<br><br>Ունենալ առավել բարեկեցիկ համայնք</td><td>
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br><br>Ունենալ բարեկեցիկ համայնք</td><td>
1. Համայնքային ճանապարհների վերանորոգում և կառուցում (%, ոչ աճողական)
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
2. Համայնք մտնող գլխավոր ճանապարհի վերանորոգում (%)
<table>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (%)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>
1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>
2. Համայնքի ներդրում<br>
3. Պայմանագրի կնքում<br>
4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 800000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 800000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Գեղադիր համայնքն ունի 12 կմ երկարությամբ ներբնակավայրի ճանապարհներ, և փողոցներ, 13 կմ երկարությամբ սեփականաշնորհված տարածքներ տանող հիմնական դաշտամիջյան ճանապարհներ: Ներհամայնքային ճանապարհների 75%-ը գրունտային են, որի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է 80000.000 դրամ:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 6

**« Խմելու ջրագծերի կառուցում»**

(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| **Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը** | 2016թվականի նոյեմբերի 25-ի N WE201600639 ծրագրի իրականացում, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում: |
| **Ծրագրի անմիջական նպատակ**<br><br>*Համայնքի ջրագծերի վերանորոգման և նոր կառուցվող թաղամասի համար խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ* | |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

| | |
|---|---|
| **Ծրագրի միջանկյալ արդյունքներ**<br><br>Համայնքի բնակչությանը հատկապես ամռանը շուրջօրյա ջրամատակարարման ապահովումն է: | ***Հին խողովակների փոխարինում և նոր կառուցվող ջրագիծ (մ)*** |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

***Նոր կառուցվող ջրագծից օգտվող շահառուների թիվը***

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ (ընտանիք | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

| | |
|---|---|
| **Ծրագրի հիմնական գործողությունները** | *1. Պայմանագրի կնքում*<br>*2. Համայնքի ներդրում*<br>*3. Աշխատանքների կատարում* |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 30000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 30000.0 հազար դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Տարերային աղետները |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017թթ. |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | *Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որը երբևիցե հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև: Ինչպես նաև նոր կառուցվող թաղամասի բնակիչները ապահոված կլինեն խմելու ջրով:* |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 7

## « Փողոցային լուսավորության աշխատանքների կատարում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>միջոցներ հայթհայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ<br><br>Ունենալ արտաքին լուսավորությունով ապահոված, անվտանգ և մաքուր փողոցներ</td><td>
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br><br>Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությունը:</td><td>
1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (մարդ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (%)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>2. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում<br>3. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>4. Մրցույթի հայտարարություն<br>5. Պայմանագրի կնքում<br>6. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 50000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 50000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td>Համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտ</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ Ց

## «Խաղահրապարակի կառուցում և կանաչապատում»

(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| **Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը** | միջոցներ հայթհայթել զբոսայգիների կառուցման աշխատանքների իրականացման համար: |
| **Ծրագրի անմիջական նպատակ**<br><br>*Ունենալ կանաչապատ, առավել բարեկարգ, հանգստյան գոտիներով համայնք* | (see indicator table below) |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

| | |
|---|---|
| **Ծրագրի միջանկյալ արդյունքներ**<br><br>*Մաքուր և բարեկարգ համայնք, կանաչ տարածքներով, զբոսայգիներով և խաղահրապարակներով:* | (see indicator tables below) |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

| | |
|---|---|
| **Ծրագրի հիմնական գործողությունները** | *1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում*<br>*2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում*<br>*3. Մրցույթի հայտարարություն*<br>*4. Պայմանագրի կնքում*<br>*5. Աշխատանքների կատարում* |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 5000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 5000.0 հազար դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Տարերային աղետները |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքն չունի զբոսայգի, համյնքի կենտրոնում կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը Տարածքը ամբողջովին ծառապատված է: Նախատեսվում է կառուցել երեխաների համար խաղահրապարակ: |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 9

## « Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի ստեղծում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ներգրավել ներդրողների համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրության իրականացման համար</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ<br><br>Գյուղատնտեսության զարգացում, մթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="10">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br><br>Հողերի արդյունավետ օգտագործում, անասնապահության զարգացում,կաթնամթերքների վերամշակում</td><td colspan="7">1. Անասուների գլխաքանակ</td></tr>
<tr><td rowspan="4">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (գլուխ/ պայմանական միավոր)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Հողերի արդյունավետ օգտագործում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (հողատերեր)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. ներգրավում<br>2. Համայնքի կողմից ներդրում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր` .0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 3000.000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 3000.000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր, իսկ համայնքի կողմից ներդրումը կլինի ճանապարհային և կոմունիկացիոն ենթակառուցվածքների ապահովմամբ:</td></tr>
</table>

Աղյուսակ 12.

Համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագիր

հազար դրամ

| Հ/Հ | Ծրագրի անվանումը | Չափի միավորը | Ծրագրի քանակական ծավալը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2017թ | 2018թ | 2019թ | 2020թ | 2021թ | Համայնքի բյուջե | Դոնոր կազմա-ներ | Պետ. բյուջեով |
| 1. | Մսուր մանկապարտեզի գույքով և սարքավորումներով ապահովում | քմ | 382.9 | 10.000,0 | 8.000.0 | 2.000.0 | : | : | : | | 10.000.0 | |
| 2. | Համայնքի գլխավոր հատակագծի աշխատանքների ավարտ | | | 500.0 | 500.0 | | | | | 500.0 | 500.0 | |
| 3. | Կոյուղագծի կառուցում | գծմ | 5000 | 20,000.0 | | 5.000.0 | 5.000.0 | 5.000.0 | 5.000.0 | | 20,000.0 | |
| 4. | Ոռոգման ներհամայնքային ցանցի կառուցում | գծմ | 7000 | 80.000.0 | 5.000.0 | 20.000.0 | 25.000.0 | 25.000.0 | 5.000.0 | 4500.0 | 80.000.0 | |
| 5. | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների կառուցում, ասֆալտապատում | քմ | 6000 | 80.000.0 | 10.000.0 | 10.000.0 | 20.000.0 | 20.000.0 | 20.000.0 | 3.000.0 | 72.000.0 | |
| 6. | Խմելու ջրագծերի կառուցում | գծմ | 7000 | 30.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 2.000.0 | 30.000.0 | |
| 7. | Փողոցային լուսավորության աշխատանքների ավարտ | | | 5.000,0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | | 5.000,0 | |
| 8. | Խաղահրապարակի կառուցում և կանաչապատում | հա | 5 | 5,000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | | 5,000.0 | |
| 9. | Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման արտադրամասերի ստեղծում | միավոր | 1 | 3,000,0 | 1.500.0 | 1.500.0 | | | | | 3,000.0 | |

## ԲԱԺԻՆ 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԱՅԼՆ) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ՕՏԱՐՄԱՆ,ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի (այդ թվում՝ հողերի) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2017-2021 թթ. ընթացքում համայնքը չունի օտարման ենթակա որևէ շենք կամ շինություն: Առկա են միայն օտարման ենթակա հողամասեր (աղյուսակ 13):

Աղյուսակ 13.

**Համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման ծրագիր**

| Հ/հ | Շենքի, շինության, հողամասի անվանումը | Հասցեն | Տարածքը/ մակերեսը (հա) | Վիճակի գնահատականը | Այլ բնութագրիչներ | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Հասարակական | | 0 | | | | | | | |
| 3. | Արտադրական | | 0 | | | | | | | |
| 4. | Գյուղատնտեսական | | 30.0 | | | 10 | 5 | 5 | 5 | 5 |

## ԲԱԺԻՆ 5

## ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

### ՀԶԾ-ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Գեղադիր համայնքի ՀԶԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 15-ում:

# ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՆՁՆԱԳԻՐ

(Գեղաշիր համայնքի)

( 2017-2021 թվականներ)

Աղյուսակ 14

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի ստացման աղբյուր | Ցուցանիշի ստացման մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| Համայնքի կայուն զարգացում | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Աղքատության շեմից ցածր գտնվող բնակիչների հարաբերությունը համայնքի բնակիչների ընդհանուր թվին (%) | | | | | | | | | | | | | | | | | | X | Սարքավորումներ համայնքների համար' համայնքապետարաններ) | Փաստաթղթային ուսումնասիրություն [illegible] |
| 2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, (%) | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| 3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով | | | | | | | | | | | | | | | | | | X | ՀՀ Ոստիկանություն | Հարցում |
| 4.Նախադպրոցական դաստիարակություն | | | | | | | | | | | | | | | | | | | | |

44

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից | | | | | | | | | | | | | | | | | | | Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների ծնողներ | Հարցում կամ խմբային հարցազրույց ֆոկուս խումբ |
| **5. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Դիտարկում |
| Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | X | Գրադարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| 5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6. Համայնքում բնակարանային շինարարության խթանումը | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում կառուցված բնակելի մակերես | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| 7. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին (այսինքն՝ գերեզմանատան հատկացված տարածքից դուրս գերեզմանատեղի չի հատկացվում) | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատված հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան/Շինարարութ-յան իրականացնող ընկերություն(ներ) | Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցում |
| **9. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարում | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան/ տարածքային զինվորական կոմիսարիատներ | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| **10. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **12. Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքի հարաբերությունը ընդհանուր լուսավորվող տարածքին, արտահայտված տոկոսով | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |
| Համայնքի մաքրման շաբաթօրյակներ | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքապետարան | Փաստաթղթային ուսումնասիրություն |

Աղյուսակ 15

ՀՀԶՀ ԿԱՊԻՏԱԼ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Գեղադիր համայնքի)
(2017-2021 թթ.)

| Ծրագրային ծրագիր | Բյուջետավորված միջոցներ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | Ծախսերի դասը | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | Բարեգործություն/Նվիրատվություն | ... մասնավոր հատված | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | ... ընթանում են | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| Մսուր մանկապարտեզի գույքով և սարքավորումներով ապահովում | 10.000,0 | 8.000.0 | 2.000.0 | - | - | - | | | | 10.000,0 | | | | 10.000,0 | | | | |
| Համայնքի գլխավոր հատակագծի աշխատանքների ավարտ | 500.0 | 500.0 | | | | | 500.0 | | | 500.0 | | | | 500.0 | | | | |
| Կոյուղագծի կառուցում | 20,000.0 | | 5.000.0 | 5.000.0 | 5.000.0 | 5.000.0 | | | | | 20.000.0 | | | 20,000.0 | | | | |
| Ոռոգման ներհամայնքային ցանցի կառուցում | 80.000.0 | 5.000.0 | 20.000.0 | 25.000.0 | 25.000.0 | 5.000.0 | 4500,0 | | | 80.000.0 | | | | 80.000.0 | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ներհամայնքային փողոցների և ճանապարհների կառուցում, ասֆալտապատում | 80.000.0 | 10.000.0 | 10.000.0 | 20.000.0 | 20.000.0 | 20.000.0 | 3000,0 | | | 80.000.0 | | 72.000.0 | | 80.000.0 | | | | |
| Խմելու ջրագծերի կառուցում | 30.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 6.000.0 | 2000.0 | | | 30.000.0 | | 30.000.0 | | 30.000.0 | | | | |
| Փողոցային լուսավորության աշխատանքների ավարտ | 5.000,0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | | | | 5.000.0 | | 5.000.0 | | 4500.0 | | | | |
| Խաղահրապարակի կառուցում և կանաչապատում | 5,000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | 1.000.0 | | | | 5,000.0 | | 5,000.0 | | 5,000.0 | | | | |
| Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման ար-տադրամասերի ստեղծում | 3,000,0 | 1.500.0 | 1.500.0 | | | | | | | 3,000,0 | | 3,000,0 | | 3,000.0 | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Գեղադիր համայնքի ՁՀԾ-ը նպատակաուղղված է համայնքի ռազմավարական նպատակների իրականացմանը և համայնքի բարեկեցության ապահովմանը:

ՀԶԾ-ի մշակումը իրականացվել է ելնելով համայնքի չափից և այլ առանձնահատկություններից: Համայնքին բնորոշող բազմաթիվ գործոնները՝ աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, վարչական տարածքի չափը, ռելիեֆը, բնակլիմայական պայմանները, համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների առկայությունն ու վիճակը և այլն, իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում համայնքի ֆինանսական կարողությունների վրա: Այդ պատճառով, համայնքի բյուջետային եկամուտների/ծախսերի ծավալից է մեծապես կախված ՀԶԾ-ում ներառվող ծրագրերի քանակը և արժեքները, գյուղապետարանի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների ծավալը, մատչելիությունը և որակը:

Գեղադիր համայնքի ՀԶԾ-ն մի կողմից դիտարկվում է որպես համայնքի ռազմավարական պլանավորման բաղկացուցիչ մաս: Մյուս կողմից ՀԶԾ-ն դիտարկվում է որպես համայնքի մասնակցային կառավարման միջոց, որը ենթադրում է համայնքի բնակիչների լայն զանգվածների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավումը համայնքի նպատակային զարգացման ու արդյունավետ կառավարման գործընթացներում: Ակնկալվում է, որ սա բերելու է Գեղադիր համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև նոր տիպի (կոլեկտիվ շահերի վրա հիմնված) ու մակարդակի փոխհարաբերությունների ձևավորման, որտեղ քաղաքականություններ և որոշումներ ընդունողները պետք է դրանք կայացնեն խորհրդակցելով բոլոր նրանց հետ, ովքեր անմիջականորեն կրելու են դրանց ազդեցությունը:

Միևնույն ժամանակ, Գեղադիր համայնքի ՀԶԾ-ը լայն հնարավորություններ են բացում համայնքի քաղաքացիական հասարակության սուբյեկտների, համայնքի բնակիչների խմբերի ու շարժումների համար՝ դրսևորելու ակտիվություն, տեղական իշխանությունների առջև խնդիրներ բարձրացնելու և դրանց դրական լուծումներին հասնելու հարցում: Նախատեսվում է, որ համայնքի բնակչությունն ակտիվ մասնակցություն կարող է ունենալ ոչ միայն ՀԶԾ-ի մշակման և քննարկման գործընթացներում, այլև դրա իրականացման մշտադիտարկման, վերահսկման և գնահատման աշխատանքներում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2017թվականի N 25-Ն

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 40-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Գեղադիր համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Հաստատված է*
*Գեղադիր համայնքի 2017 թ.*
*[illegible] 12-ի N 25-Ն որոշմամբ*

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Գեղադիր համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրացման կանոնները:

2. Կանոններում օգտագործվող հասկացությունները՝

**1)հանրային սնունդ՝** խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման եւ (կամ) սպառման կազմակերպում.հանրային սննդի ծառայություն

**2)հանրային սննդի ծառայություն՝** սպառողների սննդի եւ հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

**3)խոհարարական արտադրանք՝** կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների եւ կիսապատրաստվածքների համախումբ.

**4)ճաշացուցակ՝** կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի եւ հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

**5)հանրային սննդի օբյեկտներ՝** հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

**6)վաճառող՝** իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման եւ (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ.

**7)աշխատող** ՝ վարձատրության դիմաց վաճառողի հետ կնքված աշխատանքային պայմանագրով աշխատող՝ անմիջականորեն ծառայություն մատուցող ֆիզիկական անձ:

**8)հանրային սննդի սպասարկման սրահ՝** հատուկ կահավորված տարածք՝ նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:

3. Հանրային սննդի զբաղվող ձեռնարկությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իր հիմնադիր փաստաթղթերով և սույն կանոններով:
Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

4.Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են՝ճաշարաններ,
ռեստորաններ,սրճարաններ,բարեր,բուֆետներ
և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման օբյեկտներ:

5. Հանրային սննդի գործունեությունը իրականացվում է տեխնոլոգիական նախագծի համաձայն, որը պետք է համապատասխանի հանրային սննդի օբյեկտների համար նախատեսված շինարարական նորմերի և կանոնների պահանջներին:

6. Կազմակերպությունը հանրային սննդի ոլորտում իր տնտեսական գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

7. Վաճառողը հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահից դուրս իրացվող խոհարարական արտադրանքի համար պետք է ունենա փաստաթուղթ, որտեղ նշվում են՝
արտադրվող ձեռնարկության անվանումը.
խոհարարական արտադրանքի անվանումը:

8. Հանրային սննդի օբյեկտի մուտքի մոտ փակցվում է ցուցանակ, որտեղ նշվում են ձեռնարկության անվանումը, տիպը, կազմակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:

9. Օբյեկտն աշխատանքային ռեժիմը սահմանում է ինքնուրույնաբար՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգը:

10. Հանրային սննդի օբյեկտի վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ:

11.Սպառողին առաջարկվող խոհարարական արտադրանքը և գնովի ապրանքները պետք է ցուցադրվեն հստակ լրացված գնապիտակներով: Հանրային սննդի օբյեկտը սպառողի պահանջով պարտավոր է նրան ներկայացնել ճաշացուցակը և լիցենզիան:

12.Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և գինը,որը ենթակա է սպառողի կողմից վճարման:

13. Հանրային սննդի օբյեկտը սպասարկող անձնակազմի անդամները (խոհարար, հրուշակագործ, մատուցող, բուֆետապան, բարմեն) պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:

14.Աշխատողներից բարմենը, խոհարարն ու հրուշակագործը մատուցողը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:

15. Սպասարկող անձնակազմի անդամները կրում են սանիտարական հագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ` լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ, վավերացված ձեռնարկության կնիքով:

16.Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

17.Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

18.Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը:

19.Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

20.Մատուցողի ներկայացրած հաշվում(որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ)նշվում են նրա ազգանունը,սպասարկման օրը,կերակրատեսակների,խոհարարական արտադրատեսակների,խմորեղենի և հացաբուլկեղենի,գնովի ապրանքների անվանումները,քանակը,զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2017թվականի N 26-Ն

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 41-րդ կետ դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի վարչական տարածքում սահմանել արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Հավելված*
*Գեղադիր համայնքի ավագանու 2017 թվականի*
*հունիսի 12-ի N 26-Ն որոշման*

# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանվում են Գեղադիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ գովազդ) տեղաբաշխման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

2. Համայնքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղախաշխումն իրականացվում է `<<Գովազդի մասին>> ,<<Տեղական ինքնակառավարման մասին>>,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին և սույն կանոնների պահանջներին համապատասխան:

3.Գովազդը տեղաբաշխվում է վահանակների, լուսատախտակների,պլակատների,ազդագրերի,հայտարարությունների,էլեկտրոնային էկրանների ձևով, համայնքային կամ այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի,շենքերի, շինությունների,դրանց վրա տեղակայված այլ կառույցների և օբյեկտների վրա:

4.Արգելվում է գովազդ տեղադրել պատմական,ճարտարապետական հուշարձանների,տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում:

5.Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն գրական հայերենն է:

6.Ճանապարհների վրա արտաքին գովազդի տեղադրման համաձայնությունը ճանապարհային երթևեկության անվտանգության մասով համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

7.Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներին արտաքին գովազդ տեղադրելու համար անհրաժեշտ է ՀՀ տրանսպորտի նախարարության համաձայնությունը:

8.Դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների արտաքին գովազդի դեպքում անհրաժեշտ է առողջապահության նախարարության թույլտվությունը:

9.Գեղադիր համայնքում գովազդի տեղադրման գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է համայնքի ղեկավարը:

## 2. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

10.Գեղադիր համայնքում գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է Գեղադիր համայնքի ղեկավարը:

11.Գովազդի տեղադրման օրվանից իրականացվում է տեղական տուրքի հաշվառում և գանձում համայնքի ավագանու կողմից սահմանված կարգին համաձայն:

12. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Գեղադիր համայնքի ղեկավարին:

13.Հայտը պետք է պարունակի դիմողի անունը,ազգանունը,իրավաբանական անձի դեպքում նրա լրիվ անվանումը,դիմողի հասցեն/իրավաբանական անձի գտնվելու վայրը/, գովազդային միջոցի տեղադրման վայրը և ժամկետը, տեղադրվող գովազդի տեսակը,հայցում՝ հողամասի տեղադրման,եթե այն տեղադրվելու է հողամասի վրա,օգտագործման համաձայնություն տալու մասին, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

14. Հայտին կցվում են.

ա) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի,իսկ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝պետական գրանցման փաստաթղթերի պատճենները,

բ)գովազդի նախագիծը համապատասխան պատկերով և գրառումներով, գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

15. Գեղադիրի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը Չափորոշիչների և Կանոնների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից ներկայացնելու համար), և 5 օրվա ընթացքում Գեղադիր համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

## 3.ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

16.Գեղադիր համայնքի վարչական սահմաններում գովազդը կարող է տեղաբաշխվել վահանակների, պլակատների,ազդագրերի,հայտարարությունների,լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

17.Արտաքին գովազդի ծավալը, քանակությունը,տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում է համայնքի ղեկավարը:

18.Արգելվում է այն գովազդը,որում խախտվում է գովազդի պատշաճությունը,այն է՝

ա)վարկաբեկում է բարոյականության համընդհանուր և ազգային նորմերը

բ)պարունակում է ռասսային, ազգությանը,մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը,տարիքային խմբին կամ սեռին,լեզվին,կրոնական և այլ համոզմունքներին վերաբերվող վիրավորական արտահայտություններ,համեմատություններ և պատկերներ

գ)ուղղակի կամ անուղղակի ձևով արատավորում կամ անհարգալից վերաբերմունք է արտահայտում պետական խորհրդանիշների (զինանշանի, դրոշի, օրհներգի, դրամանիշի և այլն) նկատմամբ.

դ)վարկաբեկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև արտադրական, առևտրային կամ այլ գործունեությունը, մասնագիտությունը, ապրանքատեսակը և այլն:

19. Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

20.Ճանապարհներին գովազդը տեղադրվում է՝հաշվի առնելով ճանապարհային երթևեկության,բնակչության անվտանգության և ճանապարհի հեռանկարային զարգացման կամ փոփոխման պայմանները,ինչպես նաև տրանսպորտային միջոցներով այն պատահական վնասելու հնարավորությունները:

21.Ճանապարհի կողային մասում Գովազդ տեղադրելու դեպքում այն պետք է լինի ճանապարհի եզրից ոչ պակաս, քան 2 - 3,5 մետր հեռավորությամբ,կախված տեղանքի առանձնահատկություններից,որը պարզվում է տեղանքի զննությամբ:

22.Վահանակները կարող են լինել երկկողմանի կամ միակողմանի,վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց և վրան նշված լինի գովազդակրի անվանումը և հեռախոսահամարը:

23. Գովազդային վահանակի հենասյունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու կամ կողմնակի ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովվի բավարար կայունություն:

24.Մեկ գովազդի մակերեսը թույլատրվում է մինչև 27 քառ. մետրը:

25.Երթևեկության ուղղությամբ գովազդային վահանակների միջև եղած հեռավորությունը՝ըստ ճանապարհների թույլատրելի արագության ,պետք է լինի՝

ա)60կմ/ժ-ից ավելի թույլատրելի արագության ճանապարհներին գովազդի ընդհանուր մակերեսի դեպքում՝ ոչ պակաս՝15-27 ք.մ՝ 200 մ., 6-15 քառ.մ՝ 150 մ, 2-6քառ.մ ՝ 100մ,

բ) բնակավայրերում 60կմ/ժ և պակաս թույլատրելի արագության ճանապարհներին գովազդի ընդհանուր մակերեսի դեպքում՝ ոչ պակաս՝ 15-27 ք.մ՝ 150 մ., 6-15 քառ.մ՝ 100 մ, 2-6քառ.մ ՝ 50մ,

26.Պաշտպանական գոտիներում գովազդային վահանակի ներքևի եզրը ճանապարհի մակերևույթից թույլատրվում է 2.2 մետր և ավել բարձրության վրա գովազդային վահանակի կողային եզրն ասֆալտբետոնե ծածկի եզրից պետք է լինի ոչ պակաս, քան 3,5 մետր:

27.Գովազդի լուսավորությունը՝

ա) լուսավորության համար թույլատրվում է օգտագործել հակահրդեհային անվտանգության պահանջները բավարարող էլեկտրական լուսավորման սարքեր.

բ)լուսավորման սարքերի ամրացումը պետք է ապահովի դրանց հուսալի միացումը գովազդային կառուցվածքի հետ այնպես,որ դիմանան ձյան,քամու ազդեցության բեռնվածություններին,տատանվող և հարվածային ազդեցություններին.

գ)երթևեկության մասնակիցներին չկուրացնի լույսով.

դ)շարժվող տարրեր պարունակող գովազդային պատկերների օգտագործումը գովազդային վահանակի վրա պետք է իրականացվի այնպես,որ գովազդային ամբողջ տեղեկությունը միաժամանակ ամբողջությամբ հայտնվի գովազդային վահանակի վրա.

ե)լուսավորությունը պետք է իրականացվի փողոցային արտաքին լուսավորության հետ միասին:

28.Ճանապարհին տեղադրված գովազդը պետք է ապահովի՝

ա)ճանապարհային երթևեկության կազմակերպման տտեխնիկական միջոցների տեսանելիությունը և երթևեկության մասնակիցների կողմից դրանց ընկալումը.

բ)կառույցի իրական չափերը չփոքրացնի ինժեներական կառույցների թունելային շինությունների չակատային մասի վրա տեղադրելու դեպքում.

գ)հետիոտնի կողմից այն ընկալելը,առանց ճանապարհի երթևեկելի մաս դուրս գալը:

29.Գովազդակիր կազմակերպությունն իր ցանկությամբ իրավունք ունի փոխելու գովազդային վահանակի պաստառը,դադարեցնելու գովազդի տարածումը՝դրա մասին 7 օր առաջ գրավոր տեղյակ պահելով Գեղադիր համայնքի ղեկավարին:

30. Գովազդակիր կազմակերպությունն ապահովում է գովազդային վահանակի պատշաճ վիճակը/ժամանակին ներկել, փոխել պատռված պաստառները և այրված լամպերը/:

31.Նշված կանոններին չհամապատասխանող գովազդի միջոցները ենթակա են համապատասխանեցման սույն կանոններին,չհամապատասխանեցնելու դեպքում դրանք ենթակա են ապամոնտաժման՝սահմանված կարգով: